

բանը, որ խօսելով 1626 տարւոյ դէպքերու մասին կը գրէ. «Յետ այսորիկ ըստ ինամոցն Աստուծոյ խորհուրդ առեալ ի միասին ճշմարիտ վարդապետքն, որք նախանձ ունէին օրինացն Աստուծոյ եւ աշխարհականք մեծամեծք եւ ոսմիկք, հեռաւորք եւ մերձաւորք գրով եւ բանիւ միաբանեալ ընդ միմեանս բնաւին Ազգս Ազքանադեան՝ կամէին զնել զՃահն լուսապայծառ եւ ուղիածեմ ի յաշտանակ բարձրաստիճան կաթողիկոսութեան. զի զլոյս օրինացն տացէ ընթանուր աշխարհի: Զոր իմացեալ զխորհուրդն վատչուէր եւ չարաբարոյ առաջորդքն եւ անուանեալ կաթողիկոսքն խանդացեալ եւ նախանձ չարութեան բորբոքեալ ոչ տային թոյլ: Սակայն եւ ինքն (Մովսէս) ոչ առնոյր յանձն զթախանձանքն բազմաց, որք գրով եւ բանիւ ազաչէին զնա թէ լեր մեզ առաջնորդ: Այլ սա ոչ կամէր վասն ծանր հարկին արքունի, որ կայր ի վերայ կաթողիկոսարանին»:

Տեսանք վերադոյն թէ ժամանակ մը նոյն իսկ Մեղքիսեղեկ կաթողիկոս տրամադիր էր, նկատելով հայ ժողովրդեան ցանկութիւնն եւ իւր անկարողութիւնը, Մովսէսին փոխանցել կաթողիկոսական իշխանութիւնը պարտքերով հանդերձ. բայց ապա ենթարկուեցաւ իւր շրջակայքի ազդեցութեան, որոնք Սահակի թիկնածութիւնը կը պաշտպանէին: Զուղայեցիք բոլոր սրտով Մովսէսի ընտրութիւնը կը փափաղէին: 1626ին, երբ Մովսէս Շահին քով կանչուած էր, ընդհանուր համոզումն